

«Հայկազյան հայագիտական հանդես», 2014, հ. ԼԴ, Բեյրութ, 654 էջ:

Սկսած 1970 թվականից՝ ավելի քան քառասուն տարի լիբանանահայ մեր հայրենակիցների ջանքերով, փոքր ընդմիջումով (լիբանանյան պատերազմի պատճառով) հրատարակվում է Բեյրութի «Հայկազյան



հայագիտական հանդեսը», որի էջերում Հայաստանի անկախության շրջանում տպագրվում են նաև հայաստանաբանական գիտնականների աշխատությունները: Հանդեսի խմբագրակազմը (պատասխանատու խմբագիր՝ հայր Անդրանիկ ծ. վրդ. Կոստյան, պատասխանատու քարտուղար՝ Անդրանիկ Տազեյան, խմբագրակազմի անդամներ՝ Արտա Էքմեքճի, Արշալույս Թովալյան, Արմեն Յուրնեշյան) միշտ ջանում է բարձր պահել նրա գիտական մակարդակը, բովանդակային հարստությունը

ընդգրկելով հայագիտության ամենատարբեր ոլորտներ:

2014 թ. հատորը (թիվ 34) նախորդներից տարբերվում է ավելի մեծ ծավալով (654 էջ): Տարեգրքում ընդգրկված է 37 հեղինակի 35 նյութ (չհաշված մահագրությունների հեղինակներին), որոնցից 26-ը՝ հայաստանցի, մնացածը՝ սփյուռքահայեր (Լիբանան, ԱՄՆ) և մեկ օտարազգի (հույն գիտնական Թեոֆանիս Մալկիդիսը): Չորս նյութ անգլերեն է, մեկը՝ ֆրանսերեն: Հոդված-ուսումնասիրությունների, քննարկումների, հրապարակումների և հաղորդումների բաժինների նյութերի բաշխմամբ ստացվում է թեմատիկ հետևյալ պատկերը՝ պատմություն՝ 10, բանասիրություն՝ 4, բանագիտություն, լեզվաբանություն, արվեստի պատմություն և երաժշտագիտություն՝ 3, գրականագիտություն՝ 2, պարագիտություն և նորագույն տեխնոլոգիաներ՝ 1:

Նշված հարուստ և բազմաբնույթ հատորի առաջին «Հոդված-ուսումնասիրություններ» բաժինը սկսվում է Արմենակ Եղիայանի «Օ տառը» վերնագրով հոդվածը, որտեղ ներկայացվում է XII դարում լատիներենից հայ գրավոր խոսք մուտք գործած օ տառի գործածության հետ կապված որոշ խնդիրներ. հեղինակը, առաջարկում է արևմտահայերենում, հատկապես օտար անուններում, բառավերջում գրել ո (թիլո, Օսլո):

Վարդան Պետրոսյանը «Հին հայերենի բացառական հոլովի վերջավորությունների ծագումը» հոդվածում գրաբարի բացառական հոլովի վերջավորությունները ենթարկում է տիպաբանական համեմատությ-

յան հնդեվրոպական մի քանի լեզուների հետ. նշվում է, որ հոգնակիի – ց վերջավորությունը ծագել է խեթերենի հոգնակի ձևից:

Հակոբ Հարությունյանն իր «Պետինգերյան քարտեզի Արտաշատ-Սատաղ ճանապարհի չպարզաբանված 6 կայարանների տեղանվան և տեղադրման խնդիրը» վերնագրով հոդվածում պատմաաշխարհագրական և լեզվաբանական նյութերի հիման վրա փորձում է որոշակիացնել այդ կայանները, ինչը չի կատարվել խնդրի հետազոտող, բազմափաստակ հայագետ Հակոբ Մանանդյանի կողմից:

Գևորգ Մադոյանի «Հայոց ծագումնաբանությանն առնչվող դրվագներ Եդիշեի «Արարածոց գրքի» մեկնության մեջ» ուսումնասիրությունը ներկայացնում է հետաքրքրական մի իրողություն: Ոսկեդարի հայ հեղինակ Եդիշեի երկում առկա հայոց հնագույն տոհմագրության որոշ տվյալներ բացակայում են հայկական այլ աղբյուրներում, որոնցից, մասնավորապես, Հայկի և Բելի պատմության վերլուծությամբ ի հայտ են գալիս հայոց որոշ կողմեր և մանրամասներ:

Նաիրա Կիլիսյանը «Լազ պարը հայ և հույն մշակույթում» աշխատության մեջ հունական և հայկական աղբյուրների հիման վրա կատարում է Փոքր Ասիայի հայերի ու հույների մեջ տարածում գտած ազգագրական երեք պարերի (լազ պար, սերա-լազիկոն և պիցակ-օյին) վերլուծություն:

Տիգրան Սիւլյանն իր «Հին Թիֆլիսը՝ իբրև մշակույթների երկխոսություն, սահքի միջավայր» հոդվածում Վրաստանի մայրաքաղաքի բազմամշակութային նկարագիրը ներկայացնում է չորս հայ գրական գործիչների՝ Մայաթ-Նովայի, Խ. Աբովյանի, Հովհ. Թումանյանի ու Ն. Աղբալյանի ընկալմամբ և գործունեության միջոցով:

Արևմտահայության տնտեսության պատմության քիչ ծանոթ երեսակն է քննված Վահրամ Շեմմայանի «Մուսա լեռան հայության տնտեսական վիճակը 19-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը» ուսումնասիրության մեջ (անգլերեն): Ճամփորդական նոթերի, ականատեսների վկայությունների, անտիպ հուշագրությունների, ժամանակի մամուլի ու տարբեր երկրներում գտնվող հայ և այլալեզու արխիվների հիման վրա (մեծ մասամբ առաջին անգամ օգտագործվող) ներկայացվում է Մուսա լեռան տարածաշրջանում գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացումը: Ուշագրավն այն է, որ այդ գործում առանցքային դեր է կատարել այնտեղ հաստատված պաշտոնաթող բրիտանացի դիվանագետ Ջոն Բարբերը (1771–1849), ինչպես նաև Հայեպի նահանգում մետաքսամշակությանը զարկ տված պոլսահայ Օննիկ Թոսպատը:

Տարեգրքի առաջին բաժինը եզրափակվում է Խորեն Գրիգորյանի «Հայաստանի առաջին հանրապետության թղթադրամները» նյութով,

որտեղ ներկայացված են 1918 թ. ստեղծված և շրջանառված ութ տարբեր թղթադրամներ՝ ՀՀ ռուբլիներ:

Հաջորդ «Քննարկումներ» բաժինը սկսվում է Արմեն Պետրոսյանի «Դիցանունից ցեղանուն. մի հնագույն պաշտամունքի հետքեր Հայաստանում» փոքրածավալ, սակայն չափազանց հետաքրքրական վարկած առաջ քաշող հոդվածով: Հեղինակը նոր մոտեցում է հանդես բերել հայերի «արմեն» ինքնանվան ստուգաբանությանը՝ այն կապելով փոքրասիական լուսնաստծու *arma* անվան հետ:

Հովհաննես Խորիկյանը «Սատրապությունների հերոդոտյան ցուցակը (պատմաաշխարհագրական քննություն)» ուսումնասիրության մեջ ընդգծել է Հերոդոտոսի ավանդած սատրապությունների կարևորությունն Աքեմենյան պետության վարչական բաժանման մեջ: Ողջ հատորում սա միակ հոդվածն է, որ անմիջականորեն չի առնչվում հայագիտությանը, սակայն, ինչ խոսք, կարևոր է նաև հայոց հնագույն պատմության որոշ հարցերի քննման համար:

Անևա Արևշատյանը «աղագս գիտութեան ձայնից» մեկնության հեղինակի հարցի շուրջ. «Անանիա Նարեկացի², թե՛ Անանիա Շիրակացի» հոդվածում վիճարկում է երջանկահիշատակ երաժշտագետ Նիկոդոս Թահմիզյանի տեսակետը: Ըստ Արևշատյանի՝ հայ երաժշտագիտական այդ հնագույն երկի հեղինակը ոչ թե Անանիա Նարեկացին է, այլ VII դարի հանրագիտակ գիտնական Անանիա Շիրակացին:

Հայ միջնադարյան երաժշտության պատմության մեջ ճշգրտումներ է մտցնում նաև հաջորդ նյութը՝ Միեր Նավոյանի «ՃԺԲ սաղմոսն ու հարակից երգատեսակներն Առավոտյան և Արևագալի ժամերգություններում (ևս մեկ անգամ Մովսես Քերթոզահոր «Յաղագս կարգաց եկեղեցույ բացայայտութիւնք» երկի շուրջ)»: Հեղինակն ապացուցում է, որ նշված երկը չէր կարող ստեղծվել, ինչպես ոմանք են պնդում, VII–VIII դարերում, այն իրականում վերաբերում է V դարին, և հեղինակը Մովսես Խորենացին է:

Արսեն Շահինյանը արաբական միջնադարյան աղբյուրների հիման վրա փորձել է ճշտել «Արմինիյա արաբական նահանգի ու նրա վարչական միավորների բնակչության մոտավոր թվաքանակը»: Նրա հաշվումներով՝ VIII–IX դարերում, արաբական նվաճումների ժամանակաշրջանում ստեղծված Արմինիյա նահանգի բնակչությունը մոտ մեկուկես միլիոն է եղել:

Արծվի Բախչինյանն անդրադարձել է Հայաստանի առաջին հանրապետության պատմության քիչ ծանոթ մի իրողության՝ «Հայաստանի Հանրապետություն և Չեխոսլովակիա (1918–1920). երկու նորանկախ հանրապետությունների առաջին կապերը»: Միննույն թվականին անկախություն ձեռք բերած հայերին և չեխոսլովակներին հաճախ են համեմատել միմյանց հետ: Մյուս կողմից նորաստեղծ Չեխոսլովակիան

առաջին քայլերն է կատարել Հայաստանի հետ տնտեսական կապեր հաստատելու ուղղությամբ:

Անգլիագիր ամերիկահայ գրողի՝ վերջերս հայերեն թարգմանված վեպի քննությունն է կատարել Քնարիկ Աբրահամյանը «Ինքնության հաղթահարման բարդույթը Փիթըր Սուրյանի «Միրի» վեպում» հոդվածում:

Վիքի Չափարյանն իր «Հայոց ցեղասպանությունն ամերիկյան նախագահական ճառերում. Ջորջ Վ. Բուշից մինչև Բարաք Օբամա. քաղաքական ճառի վերլուծական հետազոտություն» անգլերեն հոդվածում վերլուծության է ենթարկում ԱՄՆ նախագահների նախընտրական խոստումներն ամերիկահայությանը և հետընտրական չքմեղանքի ու խուսափողական ելույթները:

Համահեղինակներ՝ Եվգենյա Պատուրյանը, Վալենտինա Գևորգյանը և Մարիամ Մաթևոսյանը հանդես են եկել «Արդյո՞ք googling-ը տեխնիկա է. ի՞նչ կարող է բացատրել Համացանցը ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին» հոդվածով: Հեղինակներն առաջ են քաշում այն տեսակետը, որ գործող ՀԿ-ները պետք է որոշ չափով տեսանելի լինեն առցանց և ճանաչողական googling-ի կիրառման միջոցով:

Աշոտ Հայրապետյանը «Բառակերտությունը որպես լեզվի հաղորդակցական գործառույթի իրացում» ուսումնասիրության մեջ ներկայացրել է բառակերտման կարևորությունը լեզուն կենսունակ պահելու հարցում և, մասնավորապես, տարբերակել է հայերենում բառակերտման երկու մեթոդ՝ գծային և ոչ գծային:

Հայ իրականության այլևայլ կողմերի նոր իրողություններ է բացահայտում «Հրապարակումներ» բաժինը: Կարինե Ալեքսանյանը ներկայացրել է «Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանության գործունեությունը թուրքական ռազմակալման շրջանում (1918, մայիս-դեկտեմբեր)», որտեղ արխիվային հարուստ նյութի հիման վրա տրված է հայոց նոր շրջանի պատմության կնճռոտ էջերից մեկը՝ Ալեքսանդրապոլի գավառի վեցամսյա գավթումը թուրքերի կողմից:

Անդրանիկ Տազեայանը հրապարակել է հաճրնցի Հարություն Հովակիմյանի՝ 1950-ին ամբողջացրած «Հիշատակարան» անտիպ հուշագրքում տեղ գտած «Հաճնոյ բարբառով բանահիւսական գողտրիկ փունջ մը», մասնավորապես՝ հինգ երգ և երկու գրույց:

«Դերենիկ Դեմիրճյանի նորահայտ ձեռագիրը. Ղարաբաղի և Նախիջևանի հարցի արծարծումներ» նյութով Կարինե Ռաֆայելյանը շրջանառության մեջ է դրել մի անտիպ փաստաթուղթ, հավանաբար, 1954-ին գրված «Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի մասին» 24 էջանոց գրությունը, որտեղ գրողը, Ստալինի մահից մեկ տարի անց, անդրադառնում է հայկական այդ պատմական տարածքների Հայաստանին վերադարձնելու իրավունքին:

Վարդան Մատթեոսյանը «Թեոդիկին ուղղված նորահայտ նամակներ» տպագրությամբ անհայտությունից հրապարակ է հանել «Ամենուն տարեցույցի» խմբագրին ուղղված 20 անտիպ նամակ, որոնց հեղինակների թվում են ականավոր այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Մաղաքիա Օրմանյանը, Բարկեն Կյուլեսերյանը, Տիգրան Կամսարականը, Վահան Թոթովենցը, Շուշանիկ Կուրդինյանը, Հրանտ Նազարյանցը և այլք:

Զավեն Մսրըլյանն անգլերենով ընթերցողի դատին է հանձնել 1998–2001 թվականներին վերաբերող «Շվեյցարիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գծով ջանքերը» հոդվածը, որում ներկայացրել է նաև իր իսկ գրած նամակները՝ ուղղված հայասեր երեսփոխանների պարագլուխներին ու Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարին:

Հարուստ է նաև «Հաղորդումներ» բաժինը: Արմեն Սարգսյանը «Առած-ասացվածքները, անեծք-օրհնանքները և հանելուկները Արցախի բանահյուսության մեջ» նյութում մանրակրկիտ քննության է ենթարկել բանավոր մշակույթի այդ փոքրածավալ նմուշները: Հայոց խաչքարային արվեստի մի հնագույն նմուշ է ներկայացված Աշոտ Գ. Մանուչարյանի «Թվագրությամբ հնագույն՝ Թ. դարի խաչքարանդակ քար Մեղրու տարածաշրջանից» հոդվածում, իսկ Թամարա Մինասյանն ուսումնասիրության առարկա է դարձրել «Գտչավանքի և Դիզակ գավառի ձեռագրական ժառանգությունը». վերջինիս հետազոտության նյութը XV–XVII դարերում Դիզակ գավառում ստեղծված 22 ձեռագրերն են:

Լիլիան Հովակիմյանի ուսումնասիրության առարկան 1902-ին գրված ռուս գրականության մեջ ոչ հայտնի, սակայն միանգամայն ուշագրավ մի վիպակ է, որի գործողությունները մասամբ առնչվում են հայ իրականությանը, ուր առանձնացված են նաև հայ հերոսներ («Հայր և հայկականը Ֆեոդոր Տյուտչևի «Փախստականը» վեպում»):

Ամերիկահայ մամուլի պատմության վաղ շրջանին վերաբերող հետազոտություն է կատարել Հասմիկ Եսայանը «Կալիֆոռնիայի հայ պարբերական մամուլը 1900–1930-ականներին» հոդվածում. այդ շրջանի կալիֆոռնիահայ մամուլը նա բաժանել է երեք խմբի՝ քաղաքական, կրոնական ուղղվածության և անկախ (ազգային, հանրային, գրական, երգիծական):

Էտուար Թորիկյանն արժևորել է «Նիկողոս Թահմիզյանի երաժշտագիտական ներդրումը»: Առաջին մասում ներկայացված է Թահմիզյանի՝ XVIII–XX դարերի հայ երաժիշտների գործերի ուսումնասիրությանը նվիրված մենագրությունները, երկրորդ մասում՝ հայ երաժշտության պատմության վերաբերյալ նրա աշխատությունները, դրանց տեղն ու դերը:

«Հուշագրություններ» բաժնում շարունակվում են նախորդ հատորներից տպագրվող մերօրյա Թուրքիայում մահմեդականացած հայերի

հետ Հրանուշ Խառատյանի վարած հարցազրույցները, որոնցում ներկայացվում են նրանց ընտանեկան պատմությունները, ինքնության խնդիրները: Ընդարձակ նախաբանում հեղինակը իրավացիորեն նկատում է, որ իսլամացած հայերի պատմությունը թեև նոր է սկսել հետազոտվել, սակայն արդեն իսկ ի հայտ է բերում բազմաթիվ հարցականներ, որոնց պատասխանները փնտրվում են ավելի շատ հենց մահմեդականացված հայերի կողմից:

«Գրախոսականներ» բաժնում ներկայացված են 2011–2013 թթ. մի քանի հրատարակություն՝ «Իռլանդիա և Հայաստան. լեզվի, պատմության և պատումի ուսումնասիրությունները» անգլերեն հատորը (գրախոս՝ Անի Կոջոյան), Կլոդ Մուրաֆյանի «Արևելքի Հայաստանը. 11–13-րդ դարեր» ֆրանսերեն աշխատությունը (գրախոս՝ Ռաֆֆի Չերչյան), Վարուժան Պողոսյանի նույնպես ֆրանսերեն «Զմյուռնիայի 1922-ի աղետը» փաստաթղթերի ժողովածուն (գրախոս՝ Թեոֆանիս Մալկիդիս), Անդրանիկ Տազեյանի և Արմեն Յուրնեշյանի «Լիբանանահայ գիրքը 1894–2012» մատենագիտական ցանկը» (գրախոս՝ Վարդան Մատթեոսյան):

«Մահագրություն» բաժնում ներկայացված են 2011–2013 թթ. կյանքին հրաժեշտ տված հայագիտության մի շարք երախտավորների և համեստ մշակների կենսագրականներ՝ Վահան Սարգսյան, Նիկոլայ Քոթանջյան, Բաբկեն Հարությունյան, Ռուբեն Գասպարյան, Էդիկ Չոհրաբյան, Ալմաստ Չաքարյան, Արաքսի Սարյան, Մհեր Կարապետյան, Արսեն արքեպիսկոպոս Բերբերյան (Հայաստան), Պետրոս Հաճյան (Արգենտինա), Մարջրի Հուսեփյան Դոբբին (ԱՄՆ), Բորիս Զուրաբով (Ռուսաստան):

«Ցանկեր» բաժնում ընդգրկված է Եղիա Ներսեսյանի «Հնագույն և միջնադարյան շրջանի հայ դրամագիտության ընտրված մատենագիտություն. 2001–2010» անգլերեն ցանկը, որն ընդգրկում է XXI դարում գիտական ու պարբերական մամուլում հայ դրամներին նվիրված հրատարակումները (145 միավոր):

Վերջում ցանկանում ենք նշել այն ուրախալի փաստը, որ հանդեսի նյութերն աստիճանաբար դրվում են համացանցում՝ հասանելի դառնալով աշխարհի չորս ծագերում բոլոր հետաքրքրվողներին: Սակայն ցավով պետք է նշենք, որ Հայաստանի ԲՈՂ-ի՝ վերջերս ընդունած որոշմամբ «Հայկազյան հայագիտական հանդեսը» հանվել է ԲՈՂ-ի կողմից ճանաչվող գիտական հրատարակությունների ցանկից: Հուսանք, այնուամենայնիվ, որ հանդեսում տպագրվող գիտական հոդվածները հիմք կհանդիսանան այդ որոշման վերանայմանը, և այն իր հայագիտական հարուստ բովանդակությամբ կրկին իր տեղը կգտնի ԲՈՂ-ի գիտական պարբերականների ցանկում:

ԱՐՄԵՆՈՒՋԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ